ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 սեպտեմբերի 2015 թվականի N 176 - Ա

<<ԻՋԵՎԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի ԹԻՎ 82-Ա ՈՐՈՇՄԱՆ 1-ԻՆ ԿԵՏԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի իդ) կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.7-րդ կետերով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել <<Իջևանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության հաստիքացուցակը համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2015 թվականի մայիսի 15-ի <<ՀՀ Տավուշի մարզպետարանի ենթակայության բուժհաստատությունների հաստիքացուցակները հաստատելու և ՀՀ Տավուշի մարզպետի 2014 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 142-Ա որոշումն ուժի կորցրած ճանաչելու մասին>> թիվ 82-Ա որոշման 1-ին կետը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

23 սեպտեմբերի 2015թ.
ք. Իջևան